Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը օտարելու և մեկնարկային գներ սահմանելու վերաբերյալ: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է օտարել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը և սահմանել մեկնարկային գներ:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքային սեփականություն հանդիսացող 12 միավոր հողամասերի աճուրդ-վաճառքի մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Համայնքային սեփականություն հանդիսացող 12 միավոր 7,082614 հա ընդհանուր մակերեսով հողամասերը օտարելու մասին որոշման ընդունումը (որոնց կադաստրային արժեքը կազմում է 9320556 դրամ) Նաիրի համայնքի բյուջեում ենթադրում է 26400000 դրամ եկամուտների ավելացում, ինչպես նաև աճուրդի ժամանակ կատարված քայլերի արդյունքում հավելվող լրացուցիչ գումարներ:

Աշխատակազմի բնապահպանության,
գյուղատնտեսության և հողաշինության
բաժնի պետ՝ **Բ. Թադևոսյան**